600.0153.29.04.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2020 թվականի №153Ա
քաղ. Երևան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱՅԻ №44 ՏԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Արմավիրի մարզի Արագած համայնքի Հաղթանակի պողոտայի №44 տան (այսուհետ՝ Առանձնատուն) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումն առանց միացման վճարի գանձման իրականացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն ներկայացրած՝ Առանձնատան բնակիչ Ալիկ Ֆահրադյանի (այսուհետ՝ Դիմող անձ) 2020 թվականի հունվարի 16-ի դիմումը,

բ) Հայաստանի Հանրապետության սոցիալական աջակցության Վաղարշապատի տարածքային բաժնի կողմից տրամադրված 2020 թվականի հունվարի 16-ի №192 տեղեկանքը, որի համաձայն Դիմող անձը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, և նրա ընտանիքի անապահովության միավորը կազմում է 34.26,

գ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի համայնքապետարանի համայնքի ղեկավարի կողմից տրամադրված 2020 թվականի հունվարի 14-ի տեղեկանքը, որի համաձայն Դիմող անձը բնակվում է Առանձնատանը,

դ) Դիմող անձի սույն թվականի ապրիլի 21-ի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության սույն թվականի փետրվարի 19-ի №78-20 գրությունները, որոնց համաձայն վերջիններս չեն առարկում Առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
   1) Առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումն իրականացվում է առանց միացման վճարի գանձման.
   2) չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
29 ապրիլի 2020թ.